

**SANDRO SARDARYAN**

**ARMENIAN PETROGLYPHS  
FROM STONE TO BRONZE AGES**



**САНДРО САРДАРЯН**

**НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ  
В АРМЕНИИ ОТ КАМЕННОГО  
ДО БРОНЗОВОГО ВЕКОВ**

**YEREVAN - ЕРЕВАН  
YSU PUBLISHING - ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ  
2010**

**ՍԱՆԴՐՈ ՍԱՐԴԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԺԱՅՈՒՊՈՒՍԿԵՐՆԵՐԸ  
ՔԱՐԻ ԴԱՐԻՑ  
ՄԻՆԶԵՎ ԲՐՈՆԶԻ ԴԱՐ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2010**

**Հրատարակության պատրաստեց Ֆենիքս Սարդարյանը  
Գիտական խորհրդատու՝ Հասմիկ Ավետիսյան**

**Սարդարյան Սանդրո**  
Ս - 260 Հայաստանի ժայռապատկերները քարի դարից մինչև բրոնզի դար / Սանդրո Սարդարյան: -Եր.: ԵՊՀ հրատ., 2010 թ., 244 էջ:

Գրքում ընդգրկված են երկար տարիների ընթացքում Հայաստանի մի շարք վայրերում (Ջերմուկ, Արագած, Գեղամա լեռներ) հեղինակի հայտնաբերած և հետազոտած նախնադարյան արվեստի նմուշները՝ ժայռապատկերները, որոնք մեծ արժեք են ներկայացնում թե՛ նախնադարյան մարդու կյանքի ճշգրիտ արտացոլման և թե՛ կատարման վարպետության տեսանկյունից:

ՀՏԴ 941(479.25) : 902/904  
ԳՄԴ 63.3 (2Հ) + 63.4 (2Հ)

ISBN 978-5-8084-1202-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.  
© Ֆ. Ս. Սարդարյան, 2010 թ.

**ԵՐԿՈՒ ԽՈՍՔ**

Սույն աշխատությունը հնագետ Սանդրո Սարդարյանի վերջին անտիպ ուսումնասիրությունն է, որը հրատարակվում է հեղինակի մահից 15 տարի անց:

Հայաստանի հնագույն պատմության բնագավառում Ս. Սարդարյանի ծառայությունները դժվար է գերազնահատել: Հայ և օտար գիտնականների շուրջ մեկդարյա հետազոտությունների արդյունքում Հայաստանի պատմությանը հատկացվում էր 4000 տարի: Քարի և պղնձի դարերի փոքրաթիվ գտածոները հիմնավորված չէին: 1944 թվականից սկսած Արագածի տարածքի մանրակրկիտ հետազոտություններից հետո Ս. Սարդարյանը Արտին լեռան լանջերին գտավ նախամարդու 12 կայան-արհեստանոց. **փաստորեն հայտնաբերվեց և լուսարանվեց մարդկության պատմության հնագույն և ամենաերկարատև ժամանակաշրջանը: Հաստատվեց, որ նախամարդը մեր երկրի տարածքում ապրել է միլիոնավոր տարիներ առաջ, և որ մեր երկիրը մտնում է այն ընդարձակ գոտու մեջ, որտեղ մարդը ծագել է, ծնավորվել, անցել զարգացման բոլոր փուլերը, ընդ որում՝ անընդմեջ:**

1954 թ. Երևանում ռուսաց լեզվով հրատարակված «Палеолит в Армении» մենագրությունը համարվեց խորհրդային հնագիտության կարևոր նվաճումներից մեկը, մտավ գիտական շրջանառության մեջ: Հայաստանի պալեոլիթով էին սկսվում «Очерки истории СССР», «История СССР», «Всемирная история» ժողովածուները, ակադեմիկոս Պ. Եֆիմենկոյի «Первобытное общество» մենագրությունը: «Палеолит в Армении» գիրքը թարգմանվեց ֆրանսերեն: 1967թ. հրատարակված «Նախնադարյան հասարակությունը Հայաստանում» գրքի առանձին բաժիններ տպագրվեցին բրիտանական հնագիտական մամուլում՝ գրավելով օտար գիտնականների ուշադրությունը:

Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր, Առաջավոր Ասիայի տարածքում արդյունաշատ պեղումներ իրականացրած ակադեմիկոս հնագետ Չարլզ Բարնեյը, օգտվելով իր և Ս. Սարդարյանի պեղումների արդյունքներից, հրատարակեց «Արարատը և Կովկասը, բլուր-բնակատեղիների բնակչությունը» աշխատությունը:

Արագածի և Գեղամա լեռների լանջերին սփռված ժայռապատկերների ուսումնասիրությամբ Սարդարյանը զբաղվել է 1945-1961 և 1963-1982 թվականներին՝ Շենգավիթը կանոնավորապես պեղելուն և Երևանի պետական համալսարանում դասախոսելուն զուգահեռ:

Արագածի և Գեղամա լեռների ժայռապատկերները, ինչպես կիսանոստրալի ընթերցողը, բազմաթիվ են և բազմաբնույթ: Դրանք հեռավոր ժամանակների մարդու աշխարհընկալման արտացոլումն են: Կան նաև ժայռապատկերներ, որոնք դեռևս վերծանման կարիք ունեն:

Համոզմունքն ունենք այն բանի, որ հրապարակվող գիրքը կունենա լայն արձագանք: Ժայռապատկերները կհետաքրքրեն ոչ միայն մասնագետներին, արվեստաբաններին, այլև ընթերցողների լայն շրջաններին:

**Գրիգոր Կարախանյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՈՒԱԿԱՏԿԵՐՆԵՐԸ ՔԱՐԻ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԲՐՈՆՁԻ ԴՎՐ

Հայաստանի քարի – բրոնզի դարերի նյութական մշակույթի հուշարձանների մեջ կարևոր տեղ են զբաղում մի շարք վայրերից գտնված ժայռապատկերները<sup>1</sup>:

Դրանք բազմիցս զբաղվել են հնագետների ուշադրությունը, խորհելու տեղիք է տվել դրանց տարիքն ու ծագման առեղծվածը: Այդ խնդիրը ցայսօր չի կարելի վերջնականապես լուծված համարել, չնայած որ նախնադարյան մարդու կյանքի պատմությունը լուսաբանելու համար ժայռապատկերները պակաս կարևոր չեն, քան Եվրոպայի քարի դարի քարայրային պատկերները:

Արագածի լանջերին, Գեղամա լեռների տարբեր մասերում՝ Պայտասարում և այլ ամայի վայրերում 1945-1982 թվականներին մեզ հաջողվեց գտնել այժյամների, մուֆլոնների, եղջերուների, շների, ծիերի, գոմեշների, ավանակների, գիշատիչների, կանանց, որսորդների (նետով, աղեղով և տեգով զինված), թռչունների, սայլերի բազմաթիվ պատկերներ (նկ.1-205 և այլն)<sup>2</sup>, որոնք փորագրված են

<sup>1</sup> Ա. Գ. Սարգսյան, *Նախնադարյան հասարակությունը Հայաստանում*, Եր., 1967, էջ 113-122, աղյուսակ XIX-XXXII, նկ. 24-29:

Հայաստանում ավելի վաղ ևս գտնվել են ոչ մեծ թվով ժայռապատկերներ: Արագած լեռան ժայռապատկերների մասին առաջին տեղեկությունները տվել է Գրիգոր Ղափանցյանը (*Հնություն մի քանի հիշատակարաններ*, «Արարատ» ամսագիր, 1914, N1, էջ 95):

Մեսրոպ Տեր-Մովսիսյանը նույնպես նման մի քանի ժայռանկարներ է տեսել Արագածի բարձրադիր փեշերին (*Արարատի և Արագածի գագաթներին*, «Արարատ» ամսագիր, 1913, N1, էջ 66):

Գ. Ա. Ղափանցյանի, Մ. Տեր-Մովսիսյանի հայտնաբերած այդ փորագրված ժայռապատկերների մասին խոսում է նաև Խ. Ս. Սամուելյանը (*Հին Հայաստանի կուլտուրան*, հ. 1, Եր., 1931, էջ 162-163):

30-ական թվականներին ժայռապատկերների հետազոտությամբ զբաղվել է Աշխարհբեկ Քալանթարը, որը նույնպես Արագած լեռան լանջերին հայտնաբերել է ոչ մեծ թվով ժայռապատկերներ (Աշխ. Քալանթար, *Արագածը պատմության մեջ*, Եր., 1935, էջ 73-74, նկ. 22, 23): Այս նյութերը հրատարակել է Լ. Ա. Բարսեղյանը (*Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ*, ՊԲՀ, 1966, N3, էջ 147-160):

Ժայռապատկերների խնդրով և նրանց ժամանակագրությամբ հետաքրքրվել է նաև Բ. Բ. Պիտրովսկին (*Археология Закавказья*, Л., 1949):

Մի շարք երկրաբաններ՝ Ա. Պ. Դեմյոխինը, Վ. Ավետիսյանը, Ս. Պ. Բալյանը, Է. Սալխասյանը, տարբեր ժամանակներում դաշտային աշխատանքներ իրականացնելիս, լուսանկարել են Գեղամա լեռներում, Զանգեզուրում, Զեյթունում իրենց հայտնաբերած ժայռապատկերները: 1966-1968թթ. Զանգեզուրում՝ Ուղտասար լեռան վրա Գ. Գ. Կարախանյանը և Պ. Գ. Սաֆյանը գտել են մեծ թվով ժայռապատկերներ (*Այունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները*, հ. 4, Եր., 1970):

<sup>2</sup> 1963թ. Արագածի լանջերի և քարայրների ժայռապատկերները տեղում նկարել է ճարտարապետ Թ. Ե. Գևորգյանը, իսկ Գեղամա լեռներում հայտնաբերված ժայռապատկերների մի մասի գրչանկարները կատարելու համար 1963 և 1964 թթ. ամռան ամիսներին մեզ հետ Գեղամա լեռներ ենք տարել ճարտարապետ Ս. Պետրոսյանին, որը տեղում մեր ցուցումով նկարել է ամիրաժեշտ ժայռապատկերները: Հետագայում, արդեն իմանալով ժայռապատկերների տեղը, Սուրեն Պետրոսյանը տպագրել է հոդվածներ, կազմակերպել է ցուցահանդեսներ, հանդես գալով որպես Գեղամա լեռների ժայռապատկերների հայտնաբերող: 1964 թվականից հետո Գեղամա լեռների ժայռապատկերների գրչանկարները կատարել են ճարտարապետներ Թ. Ե. Գևորգյանը և Յ. Ա. Թամանյանը:

ժայռերի հարթ մակերեսին: Դրանք ոչ միայն պատմական, այլև գեղարվեստական մեծ արժեք ունեն. ինքնատիպ են ոճով և հարուստ՝ բովանդակությամբ:

Հայաստանի ժայռապատկերների հայտնագործությունների վայրերը կարելի է դասել հին ժամանակաշրջանի նշանավոր հուշարձանների թվին: Նրանք գրավում են հսկայական տարածքներ և ավելի հաճախ հանդիպում են Գեղամա լեռների ոչ խոր լեռնային հովիտներում, Արագածի բարձրադիր լանջերին և քարայրներում, Սյունյաց լեռներում (Սիսիան)<sup>1</sup>:

Նրանց գտնվելու վայրերը որոշակի օրինաչափության են ենթարկվում: Գեղամա լեռների ժայռապատկերներում գերիշխում են կենդանիների և նետ ու աղեղով զինված մարդկանց պատկերները: Դրանք գտնվում են լեռնային հովիտների քարակույտերի մեջ, գլխավորապես ոչ բարձր բլուրների լանջերին: Այդ լեռնային հովիտների շղթան ձգվում է Արտիզ գյուղից հյուսիս-արևելք մինչև Պայտասար, իսկ հետո մինչև Զիարաթ լեռը: Ժայռապատկերներով քարաբեկորները գտնվում են այդ շղթայի երկարությամբ, որոնք հարուստ են բարձր արվեստական մարգագետինների ամառային արտավայրերի գոտուն:

Արագածի և Գեղամա լեռների ժայռապատկերները գտնվում են Հայաստանի ամենաբարձր լեռնային գոտիներում, քարքարոտ լեռնային հովիտներում: Ամենահարուստ հավաքածուն Պայտասարում է՝ ծովի մակերևույթից 3000 մետր բարձր: Ներկայումս այնտեղ ամենահարմար ամառային արտավայրերն են, իսկ հնում այն, պետք է ենթադրել, եղել է ծիսավայր կամ լեռնային որսորդների ու անասնապահների հանդիպման վայր: Շուրջ 50 կմ երկարությամբ ձգվում են լեռնային հովիտները, որտեղ ցաքուցրիվ փռված են ժայռապատկերներով խոշոր քարաբեկորները՝ մի հիանալի պատկերասրահ բաց երկնքի տակ:

Հայաստանում ժայռապատկերային արվեստի հնագույն նմուշներից են Զեյթունի լեռներում գտնված փղաման պատկերը և Արագածի քարայրներից մեկի պատերին նկարված երկար եղջյուրներով այժյամները և ուլերի հոտը: Հոտն առաջնորդում է ներին: Հոտին հետապնդում են տեգերով, նետ ու աղեղով զինված որսորդները (նկ. 1, 2):

Ժայռապատկերների այդ վաղ ժամանակաշրջանին հատուկ են շատ պարզեցված գծապատկերները: Նրանք ամբողջացվում են մի քանի ուղիղ գծերով, որոնք աստիճանաբար կորցնելով մանրամասները՝ անցնում են երկրաչափական ֆիգուրների:

Վաղ շրջանին բնորոշ են նաև վայրի գոմեշների փորագրված պատկերները: Վաղուց անհետացած այս կենդանիների ոսկորները գտնվել են Հայաստանի նոր քարի և պղնձի դարերի հուշարձաններում: Հսկայական ժայռաբեկորի վրա խզնված այս պատկերը, որը որսի տեսարան է ներկայացնում, գուցե հնագույն արվեստի նմուշ է: Զույգ շներով շրջապատված որսորդը աղեղից արձակված նետով խոցում է կեռ եղջյուրներով կենդանուն (գոմեշին): Ավելի ներքև՝ ձեռքերը կողք տարածած մարդ է, իսկ շներից ներքև՝ այծ (նկ. 176):

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում արորով վար անող մարդը: Մյուս քարի վրա փորագրված է վեց եղջերու և մի մարդ՝ նետ ու աղեղով զինված՝

<sup>1</sup> Շատ ժայռապատկերներ կան Կարսում, Փիրինում (Արևմտյան Հայաստան) և այլ շրջաններում:

շները կողքին: Կա առյուծ հիշեցնող մի կենդանի: Բոլոր պատկերները ուրվագծային են: Այստեղ պատկերված են նաև երկանիվ ու եռանիվ բաց և փակ սայլեր (Նկ. 52, 53, 54): Մեկ այլ տեղում քարի կենտրոնում պատկերված սայլի վրա կանգնած են նետ ու աղեղով զինված տղամարդ ու կին: Կնոջ գլխի և ոտքի երկու կողմերում օղակներ են նկարված: Աջ կողմում երկու մերկ կին են. մեկը՝ պարզած ձեռքերով, մյուսը ձեռքերը վեր է բարձրացրել (Նկ. 50):

Մի փոքր այլ բնույթի է քարայծի վրա կանգնած և նրա եղջյուրներից բռնած մարդու պատկերը: Նա կանգնած է ճանապարհի լայնությամբ, նրանից աջ և ձախ քարայծեր են, որոնց հետապնդում են շունը և կողքին կապարճ կախած, նետ ու աղեղով զինված որսորդը (Նկ. 49):

Վաղ ժամանակների արվեստի նմուշները հիմնականում վայրի խոշոր կենդանիների պատկերներ են, բայց նախնադարյան մարդը անտարբեր չի եղել նաև գործող անձանց հանդեպ: Պայտասարից ոչ հեռու, ժամանակից սևացած ժայռաբեկորի վրա պատկերված է խորը դրամատիզմով հագեցած մի տեսարան: Մայր եղնիկը ոտքերի մեջ պատսպարել է ձագին՝ կարծես պաշտպանելով շներից ու որսորդներից (Նկ. 4):

Վաղ շրջանի ժայռապատկերների մեծ մասը ցուլերի, եղջերուների, այծյամների, ոչխարների, թռչունների պատկերներ են: Իշխող են զույգերը՝ մայրը և ձագը, արուն և էգը: Բնորոշ են միևնույն կենդանիների շարքերը պատկերող ժայռապատկերները: Որսի տեսարաններ, կենդանիներ, շներ, նետ-աղեղով, թոկերով զինված մարդկանց ներկայացնող ժայռապատկերներ հանդիպում են նաև այլ վայրերում, ինչն այդ պետրոգլիֆների ծիսական նշանակության վկայությունն է: Միմյանց հետևից շարված եղջերուների, այծերի, ձիերի, թռչունների նմանօրինակ պատկերներ փորագրված են նաև Շենգավիթում հայտնաբերված կավե ամանեղենի վրա (մ.թ.ա. III հազարամյակ):

Հնագույն ժայռապատկերներում կնոջ և տղամարդու մերկությունը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ: Կանայք և տղամարդիկ զինված են նետ-աղեղով, նրանց ուղեկցում են շները: Մի քարի վրա պատկերված են տղամարդը, կինը, ձեռքերը վեր պարզած երեխան: Մեկ այլ տեղ տղամարդն ու կինը գազանակերպ են և վեր պարզած ձեռքերով, հավանաբար դիմակ են կրում: Մեկ այլ քարի վրա ընտանի այծին կերակրող մարդ է (Նկ. 129): Կենցաղային որոշ մանրամասներ կան ընտանիքով որս անելու տեսարանում: Չի բացառվում, որ այն ծեսի հետ է կապված: Ավելի ուշ շրջանի է պատկանում մակերեսային փորագրությամբ որսի տեսարանը:

Փորագրված ժայռապատկերներում խմբակային տեսարանները հասնում են կատարելության: Դրանք գերազանցում են պալեոլիթի գլուխգործոցներին: Ի հայտ է գալիս մի նոր գիծ՝ կոմպոզիցիաները բազմաֆիգուր են: Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկում ռեալիստորեն պատկերված են երեխան գրկած կին և մահակներով, տեգերով ու եռաժանիով, պարաններով, նետերով ու աղեղներով զինված մի խումբ որսորդներ: Շների հետ միասին նրանք հետապնդում են կենդանիներին՝ վայրի ոչխարներին, այծյամներին, եղնիկներին, քարայծերին, գոմեշներին: Մի կողմում զինված մարդիկ են, մյուսում՝ կենդանիները: Նկարն ապշեցնում է իր սլացքով. ոտքերը լայն բացած մարդիկ թեքվել են առաջ, ուր որ է նետը թռչելու է ձգված աղեղից: Կենդանիների կողմն են ուղղված մահակները,

նետերը, տեգերը, որսատեգերը, ցանցերը:

Հայաստանի ժայռապատկերների առանձնահատկություններից մեկը գունազարդ նկարների բացակայությունն է: Կան գունազարդման հազվագյուտ հետքեր, այսինքն՝ երևում է, որ որոշ ժայռանկարներ ժամանակին գունավորված են եղել հանքային ներկերով (հիմնականում օխրայով), սակայն մինչև այժմ ամբողջական նմուշ չի գտնվել: Քարայրերի ուսումնասիրությունը կտա այդ հարցի բացատրությունը:

Գեղամա լեռներում, Արագածում, Չանգեզուրում հայտնաբերված ժայռապատկերների մեջ որսորդական տնտեսության ժամանակին են վերաբերում կենդանիների (այծեր, եղջերուներ, վայրի ցուլեր) և մարդկանց վարպետորեն փորագրած ոչ մեծ չափերի ուրվագծային պատկերները: Այստեղ ակներև են կենդանիներին ճշմարտացի պատկերելու որոշակի փորձը և կերպարը գեղարվեստորեն մեկնաբանելու ձգտումը: Ջարմանալի կերպով կերպարներին դիմամիկա է հաղորդվել: Առարկայի հիմնալի իմացությունը զուգակցվում է հնագույն ժամանակների նկարչի փայլուն վարպետության և պատկերածի խոր ճանաչողությամբ: Եղջերուներն, օրինակ, փոքր են, նույն տիպի, բայց յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ առանձնահատկությունն ու արտահայտչականությունը: Գեղարվեստական կատարման վարպետությունը հաղորդում է կենդանու շարժումն ու լարվածությունը: Գծերը զարմանալի մանրամասներ են ներկայացնում: Կատարման վարպետությունը և դրա հետ օրգանապես կապված բովանդակությունը ստեղծել են խոր արտահայտչականություն ունեցող պատկերներ:

Հետագա նոր քարի դարի հողագործության և անասնապահության ժամանակաշրջանի արվեստը ձևով և բովանդակությամբ ավելի բազմազան է: Դրա լավագույն ապացույցն են Պայտասարի հարավ-արևմտյան մասում բլուրների լանջերին սփռված ժայռապատկերները: Անթիվ հողմահարված ժայռերը կարծես հսկայական հրապարակ են կազմում, որի մակերեսը նկարչի կտավ է հիշեցնում: Արագածի և Գեղամա լեռների ժայռապատկերների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանի արվեստը երկարատև զարգացում է ապրել: Այստեղ կողք-կողքի գտնվող առանձին քարերի վրա հայտնաբերվել են տարբեր ժամանակներում կատարված նկարներ: Դրանց մի մասը վաղ ժամանակի գծային պատկերներ են՝ որոշ չափով սխեմատիկ, և ոչ միշտ է հնարավոր մեկնաբանել: Շատերը մնում են անհասկանալի, ինչպես օրինակ՝ տարբեր տիպի հրեշները: Որոշ քարերի վրա հրեշները այծերի ու շների կողքին են: Այդ գերբնական էակները երկար և ծոված խոշոր մարմին ունեն, երկար ծուռ ոտքեր, արծվի մագիլներ, երկար վզի վրա գազանի գլուխ, նաև՝ եղջյուրներ (Նկ. 97, 98, 99):

Հայաստանում նոր քարի դարի վերջին ի հայտ են գալիս առաջին խաշմարածները: Գեղամա լեռների ժայռային արվեստը նոր փուլ է թևակոխում: Երևան է գալիս բարդ սյուժետային փորագրությունը, որը պատկերում է բնակիչների և հոտի տեղափոխությունը ցածրավայրերից դեպի լեռնային գոտի: Այդ շրջանի ամենավաղ արվեստի նմուշները պատկանում են անասնապահության ժամանակաշրջանին: Գեղամա լեռների և Արագածի քարքարոտ հովիտներում դրանք հազարներ են: Սև բազալտի հողմահարված քարերին փորագրված են շարքերով մուֆլոններ, այծյամներ, ցուլեր, եղնիկներ և այլ կենդանիներ, նույնիսկ ձի:

Բովանդակությամբ այդ պատկերները նման են Սյունիքի (Ձանգեզուր)՝ ժայռապատկերներին: Վերջիններս նույնպես պատկերում են այծյամներ, վիթեր, բիզոններ, վայրի ցուլեր, վարազներ, եղնիկներ և ձիեր: Կան գիշատիչներ՝ հովազ, առյուծ և քարայրային արջ: Մարդն այստեղ խոշոր պլանով է պատկերված. զինված է նետ-աղեղով, տեգով, վահանով և ունի իրեն ուղեկցող շուն: Հանդիպում են ցուլերի պատկերներ՝ լծված երկանիվ և քառանիվ սայլերին: Այստեղ նույնպես գերիշխողը որսի տեսարաններն են, որսորդական կյանքի դրվագները:

Վաղ ժամանակի օրինակներ հանդիպում են Գեղամա լեռներում: Որսի տեսարաններում սովորական են ոչխարները, այծերը, ցուլերը, բիզոնները, եղջերուները, շներն ու գիշատիչ կենդանիները: Վերջիններս հավանաբար վագրերի ընտանիքին են պատկանում: Մարդկանց մարմինները փոքր են, ոտքերը՝ զանգվածեղ, երբեմն՝ երկար, իրանը բարակ է, գոտիավորված, գլուխը՝ մեծ ու կլոր: Ավելի ուշ ժամանակի նկարները ուրվագծերով են, տեխնիկապես ավելի կատարյալ: Վերջիններս հանդիպում են Գեղամա և Ձանգեզուրի լեռներում: Հետաքրքիր է ցուլի և մարդու ոճավորումը: Գեղամա լեռների պատկերային արվեստը տարիքով և ոճավորմամբ կապված է Արագածի և Ձանգեզուրի պատկերների հետ, զարգացել է նույն ճանապարհով՝ պարզունակ գծային, ապա՝ առավել իրատեսական, իսկ հետո՝ կտրուկ ոճավորված: Վերջիններս տարբերվում են նուրբ գծերով: Հավանաբար, նկարիչը փորագրել է ավելի ամուր նյութից պատրաստված գործիքով և ավելի վարպետորեն: Պատահում են նաև ավելի բարդ կոմպոզիցիաներ: Ժամանակի ընթացքում գծերը հողմահարվելով խամրել են, և առաջացել է ժանգի գույնի փառ՝ պատինա:

Մի քարի վրա պատկերված է մարդկանց խումբ, վերևում և ներքևում, առաջին պլանում երևում են կենդանիներ: Եղջերուների և այծերի մեծ թիվը ցույց տալու համար՝ նկարիչը երբեմն ավելացրել է ոտքերի թիվը կամ միայն եղջյուրներ է նկարել:

Պալեոլիթի արվեստին խորթ էր մարդու հանդեպ վերաբերմունքը: Այն բնորոշ է Հայաստանի ուշ միջին քարի դարին, նեոլիթին և պղնձի դարին, երբ ձգտել են մարդուն առավել մանրամասն փորագրել՝ կարծես ընդգծելու համար նրա առաջատար դերը:

Հին Հայաստանի արվեստում բնության հիմնական շարժիչ ուժը մարդն է: Ժայռապատկերներն իրենց բնությամբ պարզ պատկերացում են տալիս ժամանակի կյանքի մասին: Տղամարդիկ հաճախ մերկ են, կանայք՝ հագնված: Հայտնի է, որ մինչև նեոլիթը մարդու հիմնական զբաղմունքը որսն էր: Որսում էին ազնիվ եղջերու, քարայծ, վայրի ոչխար, այծյամ, իսկ նոր քարի դարի ժայռանկարներում պատկերված է նաև շուն: Վայրի կենդանիների որսը պատկերելիս նկարիչը ապշեցուցիչ դիտողականություն է դրսևորել: Առջևի պլանում որսորդն է՝ տեգով, նետ-աղեղով զինված: Նետերը երկու ձևի են՝ մեծ չափի աղեղը երկար ու լայն կամարի տեսք ունի, փոքրիկ աղեղները՝ կենտրոնում փոսիկ ունեն: Շատ հնա-

<sup>1</sup> Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, *Ժայռապատկերներ Սյունիքում*, «Սովետական արվեստ», 1967, N1, էջ 31-38; նույնի *Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձաններ*, ԴԲՀ, 1969, N1, էջ 275-283, նույնի *Սյունիքի ժայռապատկերները. Հայաստանի հնագիտական հուշարձանները*, հ. 4, եր., 1970:

րավոր է, որ մեծ աղեղները բնորոշ են ավելի հեռավոր ժամանակներին: Դատելով Գեղամա լեռների ժայռապատկերներից՝ վաղ նեոլիթի ցեղերը ընտելացրել էին միայն շանը, իսկ զարգացած նեոլիթի ժամանակաշրջանում ընտելացված էին նաև ոչխարն ու այծը:

Ժայռապատկերներից մեկը հետաքրքիր որսի տեսարան է. որսորդը կտրել է որսի ճանապարհը, իսկ քիչ վեր նույն կենդանիները դեմ են առել ուրիշ որսորդների, որոնք սպառնում են տեգերով: Որոշ նկարներում պատկերված են գլուխները առաջ մեկնած, տեգերը, նետ ու աղեղները պարզած որսորդներ, որոնք հալածում են քարայծներին ու եղնիկներին:

Հայաստանի բարձր լեռնային գոտիներում խաշնարածները երկար էին մնում, քանի որ այնտեղ առանձնահատուկ բարենպաստ պայմանների շնորհիվ ոչ միայն մեծ քանակությամբ վայրի կենդանիներ էին բազմացել, այլև ժամանակի ընթացքում տարածում էր գտել նաև անասնապահությունը: Այդ ժամանակաշրջանի ժայռապատկերները պատկերացում են տալիս քարի դարի որսորդ-անասնապահների մասին:

Հայաստանի ժայռապատկերների ճշգրիտ թվագրում գոյություն չունի, նրանց բացարձակ տարիքը որոշելը խիստ դժվար է, քանի որ դրանք չեն ուսումնասիրվել հնագիտական հայտնագործություններին զուգահեռ: Տարիքով նրանք չեն համընկնում նախնադարյան հայտնի կայանների և բնակավայրերի հետ: Բացի այդ՝ հնագիտական հուշարձանները և առավել ևս քարե գործիքները, բացառությամբ Արագածի (Ձաղաներ) նյութերի, չեն կապվում ժայռապատկերների տեղավայրերի հետ: Գոյություն ունեցող սահմանափակ քանակությամբ նյութերը բավարար չեն դրանց տարիքը որոշելու համար: Այդ իսկ պատճառով այդ հուշարձանների ժամանակագրության պարբերացման և թվագրման հարցերը մնում են չլուծված: Ամենից դժվար է որոշել վաղ շրջանի ժայռապատկերների տարիքային սահմանը: Հնագիտական նյութեր ունեցող մի շարք քարայրերի նկարների համեմատումը ժայռապատկերների հետ, հնարավորություն է տալիս մոտավոր թվագրում կատարել: Այդ նպատակով մենք համադրել ենք նրանցում առկա կենդանական աշխարհը՝ պատմական տվյալների հետ: Այդ նկարների մոտավոր թվագրումը իրականացնելիս՝ մենք հիմք ենք ընդունել պատինայի գույնը, որը ժամանակին համապատասխան անցում է կատարում մուգից դեպի բաց երանգները, ինչպես նաև նկարների ոճը, կատարման վարպետությունը և բովանդակությունը:

Գեղամա լեռների, Արագածի և Ձանգեզուրի ժայռապատկերների թվագրումը դժվարանում է նաև այն պատճառով, որ մի շարք դեպքերում տարբեր ժամանակներում կատարված նկարները կողք-կողքի են: Ինչպես ասել ենք, նրանց մեջ ամենավաղն են համարվում սխեմատիկ, մի չընդհատվող գծով կատարվածները, որոնք շատ վատ են պահպանվել: Իհարկե, Հայաստանում պահպանվել են նաև եզակի շատ հին ժայռանկարներ, որոնք պատկերում են անհետացած փղեր, վայրի ցուլեր և հսկայամարմին այլ կենդանիներ:

Հայաստանի Հանրապետությունում հնագույն ժայռապատկերը գտնվել է Ջերմուկում, որը հիշեցնում է փիղ կամ մանձնտ, հավանաբար, բնորոշ վերին պալեոլիթին: Կատարման տեխնիկայով այն նկար է, ոչ թե փորագրություն:

Հաջորդ ժամանակաշրջանին են վերաբերում Արագածի քարայրային նկարները՝ որսի տեսարաններ առանց շան (նկ. 1, 2):

Արագածի նախնադարյան արվեստը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Այդ քարայրում գտնված մեզոլիթյան գործիքներից դատելով ժայռապատկերները մեզոլիթի ժամանակաշրջանի են:

Գեղամա լեռներում ներկայումս հաշվվում են հազարավոր ժայռապատկերներ՝ նեոլիթին, պղնձի, բրոնզի դարերին պատկանող:

Պետք է ենթադրել, որ Հայաստանի ժայռապատկերները գոյություն են ունեցել դեռևս վերին պալեոլիթի ժամանակաշրջանում: Այդ արվեստը ստեղծողները որսորդների, ապա անասնապահների բազմաթիվ սերունդներ են, որոնք այդ հեռավոր ժամանակներում բնակեցնում էին նշված վայրերը: Ավելի ուշ՝ նոր քարի և պղնձի դարերում, անասնապահների արվեստը կատարելության հասավ և երկարատև զարգացում ապրեց՝ մի քանի հազարամյակ:

Հայաստանում պղնձի դարի ժամանակաշրջանում ի հայտ են գալիս ծիերի և այլ քաշող կենդանիների, ինչպես նաև արորի և սայլի պատկերներ: Այդ ժամանակաշրջանի պատկերները հետզհետե դառնում են ուրվագծային: Առավել ուշ ժամանակների աշխատանքները տարբերվում են ոչ միայն ձևով, այլև պատկերվող առարկայի համդեպ վերաբերմունքով: Մարդկանց և կենդանիների ուրվագծերը հստակություն են ձեռք բերում, ի հայտ են գալիս նույնիսկ դիմագծերը: Վատ է թվագրված նաև հաջորդ ժամանակաշրջանը, որը նշանավորվում է կենդանիների ուրվագծային պատկերմամբ:

Այսպիսով, Հայաստանի նախնադարյան հասարակության ժամանակաշրջանի պատկերները իրենց բովանդակությամբ և ոճական առանձնահատկություններով բաժանվում են մի քանի հիմնական շրջանների:

1. Հայաստանի ժայռակարչության **հնագույն շրջանի** նմուշը փղի (մամոնտի) պատկեր է: Փղ-մամոնտ ներկայացնող ժայռապատկերը հատուկ է ուշ հին քարի դարին (վերին պալեոլիթ՝ 40000-12000 տարի մ.թ.ա.):
2. **Միագիծ ժայռապատկերների շրջանը**, որը նշանավորվում է այծերի ու ոչխարների, ինչպես նաև որսի տեսարանների, նետ-աղեղով ու տեգերով զինված մարդկանց (առանց շան մասնակցության) պատկերների առկայությամբ: Դա բնորոշ է միջին քարի դարի՝ մեզոլիթի (12000-8000 տարի մ.թ.ա.) ուշ շրջանին:
3. **Խորաքանդակ գծային ժայռապատկերների ժամանակաշրջանը**, երբ ի հայտ են գալիս բազմաֆիգուր սյուժետային նկարներ (բազմազան կենդանիներ, այծյամների, ոչխարների, ցուլերի, եղնիկների որս և նետ ու աղեղով զինված մարդիկ՝ շների ուղեկցությամբ): Սա վաղ հողագործության և անասնապահության ժամանակաշրջանն է՝ բնորոշ նեոլիթին (7000-4000 տարի մ.թ.ա.):
4. **Եզրագծային ժայռակարների ժամանակաշրջան**. մարդկանց և կենդանիների ֆիգուրները եզրագծերով են, զերակշռում են բարդ համադրություններն ու սյուժետային պատկերները: Ի հայտ են գալիս ծիեր, ծիավորներ՝ զինված նետ ու աղեղով, շների հետ, այծյամների, ոչխարների, ցուլերի և եղնիկների որսի տեսարաններ: Հողագործական և անասնապահական տնտեսության մեջ կիրառվում են քաշող կենդանիներ՝ բնորոշ ենեոլիթ - պղնձ-քարի դարին (3000-2000 տարի մ.թ.ա.):

ժայռապատկերների փոքրիկ խումբը (գերազանցապես Սյունիքի նյութերը) կարելի է վերագրել ավելի ուշ ժամանակի՝ մ.թ.ա. առաջին հազարամյակին: Նշված չորս շրջանների ժայռապատկերները հանդիպում են ամենուր, իսկ վաղ ժամանակաշրջանների հին նմուշները պահպանվել են սակավաթիվ վայրերում:

Արագածի, Սյունիքի և Գեղամա լեռների լավագույն ժայռապատկերներն իրավամբ կարող են համարվել Հայաստանի նախնադարյան արվեստի գլուխգործոցներ:

Արևմտյան Հայաստանում (Փիրին-Ադիյամանի և Կարսի շրջաններում) նույնպես լայնորեն տարածված են ժայռապատկերները: Նրանք հայտնաբերվել են 1937 թվականին ոչ մեծ քարայրում՝ Փալանլի-Ադիյաման-Մալաթիա տանող ճանապարհին: Քարայրը կազմված է երեք խոր որմնախորշերից: Նրանցից երկուսում պատինացված նկարներ կան: Դրանք փորագրված են կրաքարե ժայռին և պատկերում են ոճավորված վայրի այծեր: Ե. Պիտարը ենթադրում է, որ դրանք կարելի է վերագրել վերին պալեոլիթի մադլենյան ժամանակաշրջանին և որոշ նմանություն է գտնում Առաջավոր Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և Իսպանիայի ժայռապատկերների հետ:

Ելնելով Հայաստանի Հանրապետության ժայռապատկերների (Արագած, Գեղամա լեռներ, Սյունիք) առանձնահատկություններից՝ մենք եզրակացնում ենք, որ Փիրինի (Ադիյաման) և Կարսի նյութերը չի կարելի թվագրել ուշ վերին պալեոլիթից և մեզոլիթից ավելի վաղ, ինչպես և չի կարելի թվագրել ավելի ուշ ժամանակով, քան պղնձի դարն է:

Այսպիսի եզրակացության ենք հանգում դիտարկելով պղնձի դարի բարձր գեղարվեստական արժեք ունեցող նկարներն ու քանդակները, որոնք իրենց զարգացումն են ստացել ինչպես եղնիկների, այծյամների, ոչխարների, ծիերի, շների ուրվագծային նկարներում, այնպես էլ արտահայտիչ քանդակներում\*:

\* Այս աշխատությունը պատրաստ է եղել հրատարակության 1970 թվականին, ուստի հղում չկա հետազայում տպագրված մասնագիտական գրականությանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Բարսեղյան Լ. Ա., *Նոր Նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ*, ՊԲՀ, 1966, N3:
- Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ., *Ժայռապատկերներ Սյունիքում*, «Սովետական արվեստ», 1967, N1:
- Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ., *Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձաններ*, ՊԲՀ, 1969, N1:
- Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ., *Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները*, հ. 4, Երևան, 1970:
- Ղափանցյան Գ. Ա., *Հնության մի քանի հիշատակարաններ*, «Արարատ», 1914, N1:
- Плютовский Б. Б., *Археология Закавказья*, Л., 1949.
- Սամուելյան Խ. Ս., *Հին Հայաստանի կուլտուրան*, հ. 1, Երևան, 1931:
- Սարգսյան Ա. Հ., *Նախնադարյան հասարակությունը Հայաստանում*, Երևան, 1967:
- Տեր-Մովսիսյան Ա., *Արարատի և Արագածի գագաթներից*, «Արարատ», 1913, N1:
- Քալանթար Աշխ., *Արագածը պատմության մեջ*, Երևան, 1935:

## ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ\*

- С. А. Сардарян, *Палеолит в Армении*, Ереван, 1954.
- Ա. Հ. Սարգսյան, *Նախնադարյան հասարակությունը Հայաստանում*, Երևան, 1967:
- С. А. Сардарян, *Древнейшая история и культура Армении*, Ереван, 1971.
- Պալեոլիթը Հայաստանում, *Հայ ժողովրդի պատմություն*, բազմահատորյակ, հատոր 1, Երևան, 1971:
- Մեզոլիթը և նեոլիթը Հայաստանում, *Հայ ժողովրդի պատմություն*, բազմահատորյակ, հատոր 1, Երևան, 1971:
- Ա. Հ. Սարգսյան, *Հայաստանը քաղաքակրթության օրրան*, Երևան, 2004:

\*Հոդվածները նշված չեն:

## A FEW WORDS

Armenian Petroglyphs from Bronze to Stone Ages is archeologist Sandro Sardaryan's last unprinted study published now, 15 years after the author's decease.

It is difficult to overestimate S. Sardaryan's contribution to the ancient history of Armenia. In result of nearly a century of studies conducted by Armenian and foreign scientists, only 4000 years were attributed to the history of Armenia. The very few artifacts of the Stone and Bronze ages were not substantiated. Following the meticulous study of the area in Aragats initiated in 1944, S. Sardaryan has discovered 12 site-workshops of the primitive man on the slopes of Mount Artin: *in fact, the most ancient and longest period of the history of mankind was revealed and described by that. It has been confirmed that the primitive man lived in the territory of our country millions of years ago and that our country is a part of the wide area where the man has originated, taken shape, and passed all the phases of development; at that, this process has been continuous.*

'Paleolit in Armenia', a Russian-language monography published in Yerevan in 1954, has been declared one of the most significant achievements of the Soviet archeology and has entered into scientific circulation. The compilations such as Essays on USSR History, The History of USSR, World History, and The Primitive Society, a monography by Academician P. Yefimenko, begin with the Armenian Paleolit.

The book Paleolit in Armenia has been translated into French. Individual chapters of The Primitive Society in Armenia, a book published in 1967, have been published in British archeological periodicals and attracted the attention of foreign scientists.

Charles Barney, a professor of the University of London and a prominent archeologist who has conducted very productive excavations in Western Asia, used his findings and those of S. Sardaryan to publish his work titled Ararat and Caucasia; the Population of Hill-Habitations.

Sardaryan has conducted studies of petroglyphs spread over the slopes of Aragats and Geghama Mountains from 1945 to 1961 and 1963 to 1982 parallel with his regular excavations in Shengavit and lectures at the Yerevan State University.

The petroglyphs of Aragats and Geghama Mountains, as the reader will see, are numerous and diverse. They represent the world as perceived by ancient people. Moreover, there are petroglyphs that are yet to be deciphered.

I am convinced that this book will raise extensive response. The petroglyphs will be of great interest not only for experts of science and arts, but for wide range of common readers as well.

*Grigor Karakhanyan*



## ARMENIAN PETROGLYPHS FROM STONE TO BRONZE AGES IN ARMENIA\*

Among the monuments of the material culture of the Stone Age in Armenia, petroglyphs<sup>1</sup> found in a number of locations have a significant role. They have attracted the archeologists' attention many times and have risen meditations upon the mystery of their age and origin. This matter is not fully resolved yet even though the petroglyphs are of no lesser importance for shedding light upon the history of the primitive human than the Stone Age cave images in Europe.

The petroglyphs that we are interested in are of a unique style and rich content.

On the slopes of Aragats Mountain, in different areas of Geghama Mountains, on Paytasar and other locations now abandoned and deserted, in 1945-1980, we were able to discover numerous images of roes, moufflons, deer, dogs, horses, donkeys, buffalos, carnivores, women, hunters (armed with bows, arrows, and spears), birds, wagons pictured through carving on smooth surfaces of rocks (pic. 1-205, etc)<sup>2</sup>. They are not only of historical, but also of important artistic significance due to their unique style and rich contents.

The sites of discovery of petroglyphs in Armenia may be considered among the most outstanding monuments of the ancient times. Such places occupy enormous areas and are mostly encountered in shallow mountain valleys of Geghama Mountains, elevated slopes

---

\* Translated from Armenian by **Zohrab Sarkissian**.

<sup>1</sup> S. H. Sardaryan, *The Primitive Society in Armenia*, Yerevan, 1967, p.113-122, table XIX-XXXII, pic.24-29.

A small number of petroglyphs have been discovered in Armenia earlier. The first data on petroglyphs of Aragats Mountain have been presented by Grigor Ghapantzyan (*A Few Memories of Antiquity*, Ararat Magazine, 1914, no.1, p. 95).

Mesrop Ter-Movsisyan has seen several similar petroglyphs on the elevated slopes of Aragats (*On the Tops of Ararat and Aragats*, Ararat Magazine, 1913, no.1, p. 66).

The few petroglyphs discovered by G. A. Ghapantzyan and M. Ter-Movsisyan have been referred to by Kh. S. Samuelyan (*The Culture of Ancient Armenia*, vol.1, Yerevan, 1931, p.162-163).

In 1930s, Ashkharhbeq Kalantar had been studying the petroglyphs, and he had discovered another small number of them on the slopes of Aragats mountain as well (A. Kalantar, *Aragats in History*, Yerevan, 1935, p.73-74, pic.22, 23). The relevant materials have been published by L. A. Barseghyan (*New Materials on the History of Art of the Ancient Period in Armenia*, HPM, 1966, no.3, p.147-160).

B. B. Piotrovsky has also studied petroglyphs and their chronology (*The Archaeology of Transcaucasia*, Leningrad, 1949).

A few geologists, A. P. Demyokhin, V. Avetisyan, S. P. Balyan, E. Malkhasyan, have photographed the petroglyphs which they had discovered in Geghama Mountains, Zangezour, and Jermouk during field works. In 1966-1968, G. H. Karakhanyan and P. G. Safyan discovered a large number of petroglyphs on Ughtasar Mountain in Zangezour (*Petroglyphs of Syunik. The Archaeological Monuments of Armenia*, vol.4, Yerevan, 1970).

<sup>2</sup> In 1963, architect T. E. Gevorgyan made on-site drawings of the petroglyphs discovered on the slopes and in caves of Aragats Mountain. In 1963 and 1964, architect Suren Petrosyan accompanied us to Geghama Mountains and made on-site drawings of petroglyphs at our instructions. Later, knowing their location, S. Petrosyan published articles and arranged exhibitions acting as the finder of the petroglyphs in Geghama Mountains. After 1964, the drawings of the petroglyphs in Geghama Mountains were made by architects T. Y. Gevorgyan and Y. A. Tamanyan.

and caves of Aragats Mountain, and in the mountains of Syunik (Sisian)<sup>1</sup>.

Their geographic layout reveals a certain pattern. In petroglyphs of Geghama Mountains, images of animals and people armed with bows and arrows dominate. They can be found in piles of stone blocks in dales, mostly on the slopes of low hills. The range of such dales stretches north-east from Artiz village to Paytasar and further to Ziarat mountain. Bulks of stone blocks with petroglyphs are piled up along this range which sides with the summer grassland belt at upper alpine meadows.

The petroglyphs of Aragats and Geghama Mountains are located on the highest mountain belts of Armenia, in stony dales. Among them, Paytasar has the richest collection at 3 000 m above sea level. At present, the area is the most convenient summer grassland for migrant cattle breeders and, presumably, a place of worship or a meeting spot for mountain hunters and cattlemen. Dales with scattered fragments of cliffs covered with images stretch for 50 km, forming some kind of wonderful open-air art gallery.

The elephantine images in Jermouk and the ones picturing a migration of roes drawn on the walls of a cave in Aragats are among the most ancient monuments of petroglyphic art in Armenia. The latter composition displays strings of herds consisting of longicorn roes and kids, led by roe-buck; they are being chased by hunters armed with spears, bows and arrows (pic. 1, 2).

The petroglyphs of such an early period stand out by their extremely simplified linear images composed by a few straight lines in Aragats (Zaghas): their details diminish gradually until turning into geometric figures. Among the monuments of the early period, the carved images of wild buffalos are particularly notable. The remains of these extinct species have been discovered in settlements of the New Stone Age and the Copper Age in Armenia. Scratched on the bulk of a cliff, this image, presumably a piece of ancient art, has captured the moment when a hunter accompanied by two dogs transfixes a crook-horned animal (buffalo) with an arrow. A little lower, a man is pictured with his arms stretched aside and also a goat below the dogs (pic. 176).

The image of a man holding the handle of a plough is of exceptional interest. The second rock bears the images of 6 deer and a man armed with bow and arrow and accompanied by a dog. An unidentified beast looking like a lion is enclosed in a circle. All the images represent outline drawing. There are also three- and two-wheel open and covered carts among the images (pic. 52, 53, 54). In another segment, in the central part of the rock, there is a cart with a man and a woman armed with bows and arrows standing on it. There are circles drawn on the woman's head and on the both sides of her legs. On the right, there are two naked women, one with her arms extended forward and the other with her arms raised over her head (pic. 50).

The image of a man standing on a he-goat and holding its horns is somewhat different. A hunter stands across the road; a dog chases the he-goat. On a cliff next to them, there are three deer and an archer with a quiver on his side (pic. 49).

Large wild animals have been the main subjects for the art of the early age. Yet, the primitive artist has not been indifferent to the characters. Not far from Paytasar, on a cliff fragment blackened by time, a strongly dramatic scene is pictured. A doe shelters its kid between the legs as if attempting to protect it from the hunter and dogs (pic. 4).

---

<sup>1</sup> There are many petroglyphs in Kars, Pirin (Western Armenia) and other regions.



The bulk of the petroglyphs of the early period consists of various compositions including images of bulls, deer, roes, sheep, horses, and birds. The images are mostly of couples: the female and the kid, the male and the female. Images showing long strings of the same animals are quite characteristic.

However, group images picturing hunting scenes, animals, dogs, people armed with ropes have their parallels in different places: an evidence of the cultural nature of these petroglyphs which relate to the magical rituals of ancient hunting. Similar images showing proceeding strings of deer, goats, horses, birds have been carved on pottery discovered in Shengavit (III Millennium B.C.).

In ancient petroglyphs, the nudity of men and women is depicted in full detail. Men and women are armed with bows and arrows and accompanied by dogs.

On one of the rocks, a man, a woman, and a child are pictured with their hands in the air. Another composition displays a man and a woman with beast-like heads: supposedly, they are wearing masks. On the third, a man feeds a domestic goat (pic. 129). There are certain everyday features in the "Hunting Family" scene. Perhaps, it had been induced by some ritual. A hunting scene relates to a later period; its two-dimensional style is characteristic for the art of the hunting era.

In petroglyphs performed through engraving, the artistic skill for group images has achieved perfection. Such images surpass the masterpieces of Paleolith. A new feature, multi-figure compositions, appears in them. A composition in Geghama Mountains realistically pictures a group of hunters, including a woman and a child, armed with a bat, a spear and a harpoon, ropes, bow and arrows. Accompanied by dogs, they are chasing animals: wild sheep, roes, chamoises, deer, and bulls. The armed people and the animals are placed on different sides of the image. The composition has an astonishing dynamics; the figures are bent forward with their legs wide apart. The individual features of the archers standing with drawn bows have been captured quite precisely. The animals are aimed at with bats, arrows, spears, harpoons, and nooses.

One of the characteristic features of the Armenian petroglyphs is the lack of painted images. The rare traces of painting show that some of the petroglyphic images have once been colored with mineral paints (mostly ochre), yet no color images have been found. Studies of the caves may offer some explanation of this matter.

Not large, and yet masterfully carved outline figures of animals (roes, deer, wild bulls) and people relate to the era of hunting lifestyle in Geghama Mountains, Aragats, Zangezur. These images demonstrate certain skills in truthful portrayal of animals and aspirations for artistic comprehension of the characters. For stronger expressiveness of the outlines, the artist has engraved the lines as if to underline the dynamics of the character. Here, the brilliant mastership of the ancient artist combines with thorough knowledge of the subject pictured, which reflects in the images of hunters, roes, deer, horses, donkeys, and birds. The deer are small and homogeneous, and yet each of them has unique features and expressiveness of its own. The singularity of the artistic performance has enhanced the dynamics and the tensivity of the animal's image. By detailed linear engraving, not only the silhouettes, but also the individual parts outlined by distinct strokes. The skillful performance organically bound with the plot have resulted in deep expressiveness of the image.

The art of the New Stone Age of the following period, the period of cattle-breeding and farming, is more diverse. The best reflection of this are the petroglyphs scattered around the

slopes of the hills in the south-western part of Paytasar. Multiple eroded cliffs form some kind of square with a surface resembling an artist's canvas. Thorough studies of these petroglyphic monuments of Aragats and Geghama mountains prove that the art of those days has had a long period of development. Here, on separate rocks side by side, images performed at different times have been found. Some of them represent linear pictures of an earlier period. They have been performed in somewhat schematic manner and this sometimes makes it impossible to interpret them. Many of them still remain incomprehensible, e.g. those picturing various monsters. On a number of rocks, the monsters are pictured next to goats and dogs. These are preternatural creatures with massive, long, and curved bodies, long crooked legs, aquiline claws and beast-like heads on long necks, and horns (pic. 97, 98, 99).

By the end of New Stone Age, sheep-breeding took shape in Armenia and the graphic art in Geghama Mountains entered a new phase. Complex-plot engraving appeared to picture the migration of the inhabitants and the herds from plains and lowlands to higher mountain belts. The earliest samples of graphic art of this region date back to the cattle-breeding period. There are thousands of them in the rocky dales of Geghama Mountains and Aragats. On eroded rocks of black basalt, images of moufflons, roes, bulls, deer, and other animals, even horses, have been carved. By content, these images are similar to the petroglyphs in Syunik (Zangezur)<sup>1</sup>. The latter ones also picture roes, gazelles, bisons, aurochs, boars, deer, and horses. The carnivores are represented by jaguars, lions, and cave bears. Humans are pictured in close-up manner: they are armed with bows, arrows, spears, shields, and accompanied by dogs. Images of bulls yoked to two- and four-wheel carts may be found as well. Hunting scenes dominate here, too; mostly, episodes from the hunters' life are pictured.

Early instances of petroglyphs have been discovered in Geghama Mountains. In hunting scenes, usually sheep, roes, bulls, bisons, deer, dogs, and carnivores, supposedly of Felidae family. The human figures are minimalistic: with short, sometimes longer massive legs, slim bodies with thin waists, large round heads. Later, the images become outline and have more complex forms. Such petroglyphs may be found in Geghama and Zangezur Mountains. The stylization of the bull and the human figures is quite interesting.

It is notable that the graphic art of Geghama Mountains, which relates to the petroglyphs of Aragats and Zangezur by its age and stylization, has developed the same way, from primitive linear-natural images to realistic ones and then, with vivid stylization, to outline images of the later period. The latter ones stand out for their finer lines; obviously, the artist had been using harder tools to carve the stone more skillfully. The compositions become more complex, too. In the course of time, the carved lines have eroded, faded, and developed a rust-color patina.

On one of the rocks, the image of a group of people is placed on the top and a group of animals is pictured at the bottom in the foreground. To indicate a multitude of deer, the artist had sometimes added extra legs or pictured only the horns.

The art of Paleolith has never addressed the humans unlike the petroglyphs of the Late Middle Stone Age, Neolith, and the Copper Age in Armenia. This is apparent from the artist's efforts to carve the human figures most carefully and in detail as if to stress their leading role. The human has been in the very essence of the art of Ancient Armenia as the Nature's

<sup>1</sup> G. H. Karakhanyan, P. G. Safyan, *The Petroglyphs in Syunik*. "Soviet Art" magazine, 1967, no.1, p. 31-38. Same authors, *The Newly Discovered Monuments of Ancient History of Armenia*. HPM, 1969, no.3, p. 275-283. Same authors, *The Petroglyphs of Syunik, The Archaeological Monuments of Armenia*, vol. 4, Yerevan, 1970.

